ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«26» դեկտեմբերի 2019 թվականի № 47-Ա

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 699-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կանոնադրության 18-րդ կետի 21-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

«Արծաթե Սյուն» ՍՊ ընկերության կողմից հայցվող ՀՀ Շիրակի մարզի Գոգհովիտի բազալտի հանքավայրի կոորդինատների ճշգրտման նպատակով՝

1. Ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով.

Շուշանիկ Քերոբյան	Ընդերքի գործակալության պետի ժամանակավոր պաշտոնակատար (աշխատանքային խմբի ղեկավար)
Հրանտ Ավետիսյան	Ընդերքաբանական փորձաքննության և պաշարների հաստատման բաժնի պետ
Կարեն Գասպարյան	Ընդերքօգտագործման իրավունքի ձևավորման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար
Աշոտ Սարգսյան	«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

2. Աշխատանքային խմբի ղեկավարին՝

Իրականացնել ՀՀ Շիրակի մարզի Գոգհովիտի բազալտի հանքավայրից «Արծաթե Սյուն» ՍՊ ընկերության կողմից հայցվող տարածքի կոորդինատների ճշգրտման աշխատանքներ և 10-օրյա ժամկետում արդյունքները ներկայացնել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության գլխավոր քարտուղարին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

2/26/2019

X

VERIFIED OCSP 26-Feb-19 18:00:49 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118